



ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

Մեր ՅԱՐՈՐԴ
ԹԻՒՆ՝

ՈՒՐԲԱԹ, 15
ՕԳՈՍՏՈՍ 2003

«ԱՁԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

P. ՏԱՐԻ

ԹԻՒ 4(16)

ՅՈՒԼԻՍ 2003

bezdlq_mezdlq@hotmail.com

ՍԻՐԵՆՔ ՄՃԱԿՈՅԹԸ

Լաճ էք մշակոյթ բառը: Եթէ ոչ, ուրեմն առաջին անգամ «Պլտիկ-Մպտիկ»ի էջերուն մէջ պիտի հանդիպիք անոր: Մշակոյթ բառը գեղեցիկ, հնչեղ ու կարճ բառ մըն է, սակայն իմաստով՝ շատ մեծ:

Դասէն դուրս մեզի ուրախութիւն պատճառող շատ գործեր կան, օրինակ՝ երգը, պարը, երաժշտութիւնը, ասմունքը, թատրոնը, գրակա-նութիւնը, գծագրութիւնը, քանդակը, ձեռային աշխատանքը եւ ուրիշ շատ բաներ, զորս մարդը կը ստեղծագործէ: Անոնք մաս կը կազմեն մշակոյթին:


Մեզմէ շատերը աստուածատուր շնորհներ ունին. անոնք փոքր տա-րիքէն յատուկ դասընթացներու հետեւելով՝ կը յայտնաբերեն իրենց տաղանդները եւ մեծնալէ ետք կը դառնան երգիչ, պարող, նուագող, ասմունքող, դերասան, գրագէտ, գծանկարիչ, քանդակագործ...

Վերը ըսի, թէ մեզմէ շատեր... այսինքն՝ մենք բոլորս ալ այդ նոյն տաղանդները չունինք: Սակայն ունինք մէկ այլ տաղանդ, որուն ամէն մարդ չի գիտակցիր: Մենք բոլորս ալ ունինք սորվելու եւ գնահատելու տաղանդը: Այսինքն՝ եթէ չենք կրնար նուագել, կրնանք երաժշտութիւն ունկնդրել, նուագարաններուն մասին տեղեկութիւն հաւաքել, նուագ-խումբերուն մասին սորվիլ, երաժշտութիւն յօրինողներուն անուններն ու կեանքը իմանալ: Կրնանք դերասանական շնորհ չունենալ, բայց կրնանք սորվիլ, թէ ինչպէս պէտք է գնահատենք թատերախաղ մը, գիտնանք դերասանը լաւ խաղաց թէ ոչ:

Ես ալ աստուածատուր շնորհներ չունիմ, սակայն իմ մէջս վարգա-ցուցած եմ մշակոյթը գնահատելու յատկութիւն մը: Ան որ մշակոյթէ կը հասկնայ, քաղաքակիրթ անձ է:

Մենք՝ հայերս, պատմութեան ընթացքին շատ դժուարութիւններէ անցած ենք, սակայն քանի որ մշակութասէր անձեր եղած ենք, մենք մեզ աշխարհին ճանօթացուցած ենք մեր տաղանդներով: Օրինակ՝ ամ-բողջ աշխարհը կը ծանչնայ մեծ երաժիշտ Արամ Խաչատուրեանը, ճո-վանկարիչ Յովհաննէս Այվազովսկին, տուտուկահար Ճիւան Գասպար-եանը, ծափ երգչուհի Տաթևիկ Յովհաննիսեանը, մեծ գեղանկարիչ Արշիլ Կորթին, ֆրանսացի երգիչ Ծարլ Ավանուրը եւ ուրիշ շատ շա-տեր, որոնք հայ են եւ աշխարհին ճանօթ են իրենց տաղանդներով:

Դուք ալ փոքր տարիքէն ձեր մէջ վարգացուցէք մշակոյթը սիրելու եւ գնահատելու տաղանդը:



Զատիկի Ունանեան, Կ. Դասարան

ՎԱՐԴԱՎԱՐ

Վարդավառը հայ ժողովուրդի ամէնէն հին տօներէն մէկն է: Ան Զատիկէն ԹՅ օր ետք կու գայ: Եւ քանի որ Զատիկը միշտ նոյն թուականին չենք տօ-նել, Վարդավառը տօնելու օրն ալ կը փոխուի:



Այս տարի Վար-դավառը պիտի տօ-նենք Կիրակի, 27 Յուլիսին:

Բեթանոսական Զրջանին Վարդավառը Աստղիկ աստ-լաճուհիին եւ սիրոյ տօնն էր: Մարդիկ այդ առիթով իրարու վրայ վարդի թերթեր եւ վարդի ջուր կը թափէին:

Վարդավառը տօնելու ձեւերը Զրջանէ Զրջան կը տարբե-րէին, սակայն ամէն տեղ իրարու վրայ ջուր կը թափէին, ճա-ղիկով կը վարդարուէին եւ, քրիստոնէութեան տարածումէն ետք, առաջին հունձըրը եկեղեցի կը տանէին օրհնելու համար: Սովորութիւն էր նաեւ, որ մինչեւ Վարդավառ խնձոր չուտէին եւ տարուան առաջին խնձորը ուտէին թարմ, կամ խորովէին իրենց վառած կրակներուն մէջ:

Բետաքրքրական էր, որ երեխաներու եւ պատանիներու ամէնէն սիրած տօնն էր Վարդավառը: Անոնք դուռ - դուռ կը պտտէին: Ժողովուրդը անոնց վրայ ջուր կը թափէր եւ նուէր կու տար:

ԽՆԴՈՒՆ

Վարդավառի տօնակատարութիւններուն ատեն կը խա-ղային խաղ մը, որուն ընթացքին կ'օգտագործուէր մէկ մեթր երկարութեամբ փայտ մը: Վարունգներով, խնձորներով եւ կա-նաչեղէններով վարդարուած այս փայտը, որ վերջ ի վերջոյ կ'ունենար խաչի տեսք, կը կոչուէր խնդուն:

Պառաւ կին մը իր խնդունը կը տնկէր գիւղին հրապարա-կը: Կը սկսէին նուագն ու շուրջպարը, մինչեւ որ ամէն մարդ յոգնէր եւ երաժշտութիւնը դադրէր: Այն ատեն պառաւ կինը իր գլխուն վրայ դնելով փայտը՝ ինք կը սկսէր պարել, մինչեւ որ գիւղացիները յարձակէին վրան. խնդունը գետին կը գլորուէր՝ անոր խնձորները, վարունգները եւ ճաղիկներն ալ միասին:

ملحوق اراتاك



ԱՃԽԱՌՈՒ

ԲԱՅՕԹԵԱՅ ԽԱՏԵՐԱՍՐԱՌ

Լիբանանի ամառը գեղեցիկ է, ոչ միայն իր կապոյտ ճովով, կով լեռներով, այլ նաև՝ տեղի ունեցող փառատոներով: Լիբանանի մեջ ամրան ընթացքին իւրաքանչիւր գիւղ, գիւղաքաղաք եւ քաղաք կը կազմակերպէ իր անունը կրող փառատոներ, որոնց ընթացքին ելոյթ կ'ունենան լիբանանցի եւ օտար երգիչներ, նուագողներ, պարահումբեր եւ դերասաններ: Սակայն այս բոլոր փառատոներուն մէջ ամէնէն աւելի յատուկ ուշադրութիւն կը գրաւեն քանի մը՝ հատը՝ Պաալպէթի, Պէյթտտի, Սուրի, Պիպլոսի եւ Տէյր էլ Ամարի փառատոները: Լիբանան կը հրաւիրուին միջազգային հռչակ ունեցող շատ նշանաւոր արուեստագէտներ: Անոնք այսպիսով կ'աշխուժացնեն երկրին մշակութային կեանքը եւ առիթ կու տան լիբանանցիին՝ վայելելու աշխարհահռչակ արուեստի գործեր:

աւերակներուն մէջ: Իրենց բացառիկ ճկունութեամբ եւ հաւասարակշռութիւն պահելու կարողութեամբ ամբողջ աշխարհը հիացուցած այս կրկէսին 55 լարախաղացները եւ ածպարները Պաալպէթի բեմին վրայ պիտի զատկուտեն 14 - 16 Օգոստոսին:



ՋՈՒԹԱԿԱՅԱՐՆԵՐԸ

Ահաւասիկ ձեզի կը ներկայացնենք, թէ ինչ պիտի ըլլան այս տարուան փառատոներուն հետաքրքրական յայտագիրները:

ԿՐԿԷՍԸ

Չինաստանի կայսերական կրկէսը առաջինն է, որ ելոյթ պիտի ունենայ Պաալպէթի

Անցեալ շաբաթ Պաալպէթի փառատոնին բացումը կատարեցին իտալացի հռչակաւոր ջութակահար Ֆապիօ Պիոնտի եւ իր «Եորոփա կալանթ» նուագախումբը: Սակայն այսքանով չաւարտեցաւ փառատոներուն մէջ ջութակահարներուն բաժինը: Ծաբաթ, 19 Յունիսին չորս երիտասարդ ջութակահարներու

«Պոնտ» խումբը ոտք եւ արդի ձեւերով Պէյթտտիի պալատին կամարներուն տակ պիտի նուագէ դասական երաժշտութենէն գեղեցիկ նուագներ: Աշխարհահռչակ այլ ջութակահար մը՝ Նայճըլ Քենետի, 13 եւ 15 Օգոստոսին պիտի նուագէ դարձեալ Պէյթտտիի մէջ: Բետաքրքրական է, որ Վիվալտիի «Չորս եղանակներ» գործին Նայճըլ Քենետիի մեկնաբանութիւնը արձանագրուած է մրցանիշներու «Կինէս» գիրքին մէջ, իբրեւ ամէնէն աւելի ճախուած դասական երաժշտութիւնը:

ՓՈՔՐԻԿ ԱՐՈՒԻԵՍՏԱԳԷՏՆԵՐԸ

Պէյթտտիի փառատոնին բացումը Մորիս Պէժարի մանուկներէ եւ պատանիներէ բաղկացած պալէի խումբին «Մայր Թերեզա եւ աշխարհին երեխաները» ներկայացումէն ետք, մանուկ արուեստագէտներ ելոյթ պիտի ունենան նաեւ Պաալպէթի մէջ: 8 Օգոստոսին «Լա Մէթրիկ տէ Բոթ - տը - Սէն»ի մանուկներու երգչախումբին 30 երգիչները պիտի ներկայացնեն դասական երգեր: Անոնց պիտի ընկերակցի ֆրանսական սինֆոնիք եւ քնարական նուագախումբը:

ՕՓԵՐԱՆԵՐԸ

3 եւ 5 Յուլիսին Սուրի փառատոնին բացումը կատարուցաւ փարաւոնի մը իշխանին եւ գերի իշխանուհիի մը սիրոյ տխուր պատմութեան «Այտա» օփերայով:

Պաալպէթի մէջ 7 եւ 9 Օգոստոսին պիտի հնչեն շատ սիրուած «Քարմէն» օփերային երգերը՝ 145 երգիչներու կողմէ:

ԵՐԱԺՇՏԱՄԱՌՆ ԽԱՏՐՈՆՆԵՐԸ

Նաեւ միւլիքըլ անունով ճանօթ արուեստի այս գործերը կարելոր տեղ գրաւած են թէ՛ Պէյթտտիի եւ թէ՛ Պաալպէթի փառատոներուն մէջ: 25 - 26 Յուլիսէն «Ճիքալօ»ն, որուն ժապաւնը պատրաստուեցաւ 2002ին, իր նշանաւոր երգերով պիտի ներկայանայ հանդիսատեսներուն: «Ճիքալօ»ն, իբրեւ լաւագոյն երաժշտախառն թատերախաղը, տիրացած է մեծ թիւով մրցանակներու:

Նոյն օրերուն՝ 23 - 26 Յուլիսին, Պէյթտտիի մէջ պիտի բեմադրուի դարձեալ նշանաւոր «Ուէսթ Սայտ Սթորի»ն: Այս երաժշտախառն թատերախաղը նոյնպէս տիրացած է բազմաթիւ մրցանակներու:

ԱՊԱԳԱՅԻ ՓՈՔՐԻԿ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ

Մեր նախորդ թիւով յայտարարեցինք «Պպտիկ - Մպտիկ»ի «Եկէք շարադրենք» շարադրութեան մրցումին արդիւնքները:

«Պպտիկ - Մպտիկ»ի խմբագրական կազմին համար մեծ ուրախութիւն էր Ծաբաթ, 21 Յունիսին, «Ապղակ»ի խմբագրատան մէջ ընդունիլ խումբ մը տաղանդաւոր մանուկներ, որոնք շարադրութեան մրցումին առաջին դիրքերը գրաւած էին:

Կ'ուզենք շեշտել, որ անոնց շարադրութիւնները կը յատկանշուէին թէ՛ հայերէնի մաքրութեամբ ու գեղեցկութեամբ եւ թէ իրենց գաղափարներուն ու միտքերուն յստակ արտայայտութեամբ: Իսկ որքան մեծ ուրախութիւն էր անոնց գրածներուն մէջ կարդալ իսկապէս անսխալ լեզուով գրուած գրութիւն մը:

Իրենց մրցանակները ստանալէ ետք «Եկէք շարադրենք»ի մրցանակակիրները առիթը ունեցան պատելու «Ապղակ»ի խմբագրատան

մէջ, ճանօթանալու անոր տարբեր բաժանմունքներուն եւ տեսնելու, թէ ինչպէս թերթը կը պատրաստուի:

Կը յուսանք, որ անոնք դարձեալ կ'այցելեն մեզի եւ այս անգամ իրենց հետ կը բերեն նոր գրութիւններ: Եւ ինչու ոչ, թերեւս մօտ ապագային անոնք աւելի մօտէն մասնակցին «Պպտիկ - Մպտիկ»ի պատրաստութեան աշխատանքներուն եւ դառնան մէկական փոքրիկ լրագրողներ...





100րդ «ԹՈՒՐ ՏՐ ՖՐԱՆՍԱ»Ն

Ճարաթ, 5 Յուլիսին սկսաւ Ֆրանսայի հեճե-լարշաւի շրջավապը՝ «Թուր Տր Ֆրանսա»ը, որ կը նկատուի այս մարտնչուն ամենէն հետաքրքրա-կան եւ կարեւոր շրջավապերէն մէկը: Ծրջավա-քը, որ պիտի շարունակուի մինչեւ 27 Յուլիս, կ'ընդգրկէ բացման մրցում մը եւ 20 հանգրուան: Բանգրուաններուն ընդհանուր երկարութիւնը կը հասնի 3427,5 քիլոմէթրի:



Ծրջավապին ընթացքին կը նուիրուին յատուկ շապիկներ եւ մրցանակներ: Ամէ-նէն արագ ժամանակը արձանագրող հե-ճելանուորողը կը հազնի դեղին շապիկը, ամենէն աւելի կէտեր ապահովողը՝ կանաչ շապիկը, ամենէն լաւ լեռ մագլցողը՝ ծեր-մակ շապիկը, իսկ ամենէն լաւ երիտա-սարդ հելեճալնուորողը կը հազնի կէտաւոր շապիկը: Մրցանակներ կը ստանան նաեւ ամենէն լաւ արդիւնք արձանագրած խում-

Այս տարի «Թուր Տր Ֆրանսա»ը իր 100րդ տարեդարձը կը տօնէ: Ուրեմն, ֆրանսացիները պատրաստուած են խանդավառ ու տօնական մթնոլորտի մէջ նշելու այս կարեւոր դէպքը: Կազմակերպիչներուն համաձայն, վերջին հանգրուանի աւարտին տեղի պիտի ունենայ տօնակատարութիւն մը, որուն պիտի մասնակցին նախապէս ախոյեան եղած հեճելանուորո-ւնք: Այս դէպքը ուղղակիօրէն հեռատեսիլէն պիտի սփռուի 160 եր-կիրներու մէջ:

բին հեճելանուորողները: իսկ այս տարի շրջավապին 100ամեակին առիթով աւանդական այս մրցումներուն եւ շապիկներուն կողքին մրցանակակիր պիտի ստանան նաեւ նիւթական նուէրներ:

«Թուր Տր Ֆրանսա»ին կը մասնակցի 22 խումբ, իւրաքանչիւրը՝ 9 հեճելանուորողով: Այն հեճելանուորողը, որ առաջինը ժամանման գիծ կը հասնի, կը շահի հանգրուանը, իսկ ընդհանուր դասաւորումը կը ձշողուի բոլոր հանգրուաններուն ընթացքին իւրաքանչիւր հեճելան-ւորդի արձանագրած ժամանակները գումարելով: Այն հեճելանուոր-ողը, որ 20 հանգրուանները կ'ամբողջացնէ ամենէն կարճ ժամանա-կամիջոցին, կը տիրանայ բաժակին:


Ծիշդ է, որ «Թուր Տր Ֆրանսա»ին կարգ մը հանգրուանները շատ երկար ու յոգնեցուցիչ են, բայց հեճելանուորողներուն արտօնուած է մրցումներուն ընթացքին ուտել, խմել եւ նոյնիսկ իրենց հեճելանիւ-նքը փոխել: Ասիկա կ'արտօնէ, որ անոնք յոգնութիւնը «մոռնալով» արշաւեն դէպի ժամանման գիծ, այսինքն՝ յաղթանակ:

Յիշեցնենք, որ եթէ ամերիկացի հեճելանուորդ Լէնս Արմսթրոնկ, այս տարի եւս տիրանայ տիտղոսին, ան պիտի շահի «Թուր Տր Ֆրանսա»ի իր յաջորդական 5րդ տիտղոսը եւ այսպիսով պիտի հա-ւասարի Միկէլ Ինտուրայնի, Պեռնար Բինոյի, Էտի Մերքսի եւ Ժաք Անքերթելի հաստատած մրցանիշին:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● **ՖՈՒԹՊՈՒԼ** միջցամաքա-մասային մրցաշարքի կիսա-ւարտական մրցումին (Քամե-րուն-Քոլումպիա), քամերունցի միջնապահ Մայք-Վիվիէն Ֆոյէ սրտի տագնապի մը պատճա-ռով մահացաւ: Անոր յիշատա-կը յարգելու համար ՖԻՖԱի նախագահը՝ Սէփ Պլեթըր յայ-տարարեց, թէ 2005ին տեղի ունենալիք միջցամաքամասա-յին մրցաշարքը պիտի կոչուի Ֆոյէի անունով:

մին ներկայացաւ ճերմակ տա-րաւներով եւ իրենց թեւերուն սեւ երկվ կապած՝ առ ի յար-գանք Ֆոյէին: Մրցումը վերջ գտաւ Ֆրանսայի կողմը կողմ, երբ երկարած գուլէ ետք, Թիե-րի Բանրի նշանակեց մրցումին միակ, բայց ոսկեայ կողմ:



բաժակին: Ան այսպիսով նոր մրցանիշ մը հաստատեց՝ տի-րանալով Ուիմպլըտընի իր 20րդ բաժակին, եւ այդ մէկը՝ իր բաւական յառաջացած տա-րիքին:

● **ՖՈՒԹՊՈՒԼ** միջցամաքա-մասային մրցաշարքին աւար-տական մրցումը տեղի ունեցաւ 29 Յունիսին, «Սթատ Տր Ֆրանսա»ի մէջ եւ իրարու դէմ հանեց Քամերունի եւ Ֆրանսա-յի ֆութպոլի ազգային խումբե-րը: Մրցաշարքին կը մասնակ-ցէին 8 հաւաքականներ՝ բաժ-նուած 2 խմբակներու: Քամերու-նի կազմը աւարտական մրցու-

● **ՔԱՆԱՏԱՅԻ** վանքուվըր քաղաքը պիտի հիւրընկալէ 2010ի ձմեռնային Ողիմպիա-կան խաղերը: Վանքուվըր այս իրաւունքը ստացաւ, երբ յա-տուկ քուէարկութեան մը ըն-թացքին իր շահած քուէներուն թիւով գերազանցեց Փիոնկ-եանկն (Բար. Քորէա) ու Սալվ-պուրկը (Աւստրիա):

սկսաւ 23 Յունիսին եւ աւար-տեցաւ 6 Յուլիսին: Աղջկանց աւարտական մրցումին ամերի-կացի Սերենա Ուիլիզմս իր քոյ-րը՝ Վինըսը, պարտութեան մատնելէ ետք տիրացաւ իր 6րդ կրան շլէմի տիտղոսին: Տղոց բաժակին տիրացաւ կուլիցե-րիացի Բոժէ Ֆետերէր: Խառն վոյզերու աւարտականին Մար-թինա Նարաթիլովան իր խա-ղընկերոջ՝ Փէյսի հետ տիրացաւ

● 2 **ՅՈՒԼԻՍԻՆ** Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբին խմբապետ Տէյվիտ Պեքհամ (նախապէս՝ Մանչեսթըր Եու-նայթըտ) փոխանցուեցաւ սպա-նական Բէալ Մատրիտ ակում-բը: . Բանդիսութիւնը մամլոյ ասուլիսներու սրահին փոխարէն տեղի ունեցաւ ակումբին պաս-թեթպոլի դաշտին մէջ, որպէսպի կարելի ըլլայ աւելի կեդրոնանալ այս կարեւոր դէպքին վրայ:

● **ԹԵՆԻՍԻ** Ուիմպլըտընի մրցաշարքը, որ այս մարտնչե-լին չորս մեծագոյն մրցաշար-քերէն (կրան շլէմ) երրորդն է,

Պեքհամ 35 միլիոն եւրոյի փոխարէն Բէալ Մատրիտէն պի-տի խաղայ չորս տարի: Կը սպասուի, որ ան խումբին օգնէ ոչ միայն ֆութպոլ խաղալով, այլ նաեւ՝ ճանուցումներով:



ՈՊՅՈՒՄ

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● Մինչև 20 Յուլիս Պերլինի մէջ կը շարունակուի աւազէ արձաններու փառատօնը: Գործերը կը սուրբապատուին Պերլինի նախկին պատին վայրին մէջ: Ընդհանրապէս 3 մեթր հասակ ունեցող այս քանդակները մեծ մասամբ կը ներկայացնեն բռնութեան, պատերազմի եւ խաղաղութեան նիւթերը:

● Ամերիկայի Օրէկոն նահանգին մէջ կիրառու նուագող 520 երաժիշտներ կազմած են կիրառահարներու աշխարհի ամէնէն մեծ խումբը: Այս նուագախումբը կազմուած է տուն չունեցող անձերու օգնող ոչ-կառավարական կազմակերպութեան մը օգնելու համար դրամ հաւաքելու նպատակով: Կիրառի նուագահանդէսը տեւած է մէկ ժամ, իսկ այս հսկայական խումբին անունը արձանագրուած է մրցանիշներու «Կինէս» գիրքին մէջ:

● ՅՈՒԼԻՍԻ առաջին շաբթուան ընթացքին համաշխարհային առողջապահութեան կազմակերպութիւնը յայտարարեց, որ ՍԱՐՍԻ համաճարակը զսպում է:

Ներկայիս հիւանդանոցներու մէջ ՍԱՐՍԷ տառապող հիւանդներուն թիւը 200 է: Նշենք, որ համաճարակին ընթացքին վարակուեցաւ շուրջ 8400 հոգի եւ մահացաւ 812 հոգի:

Ըստ մասնագէտներու, տակաւին բազմաթիւ հարցեր չեն յստակացած, ինչպէս՝ հիւանդութեան ճագումը, դարմանումի ամէնէն լաւ ձեւերը եւ այլն:

● Գիտնականներ կը հաստատեն, թէ Ամազոնի մէջ գտած են ձուկի նոր ընտանիք: 1999ին գտնուած օձաձուկի նմանող այս ձուկը տակաւին անուն մը չունի: Գիտնականներ վայն կ'անուանեն խորհրդաւոր ձուկը, որովհետեւ կարելի չէ վայն պետեղել ճանօթ որեւէ ընտանիքի մէջ: Ան ունի օձաձուկի նման երկար մարմին, բայց օձուկու է նաեւ լողակներով: Ան 15 սմ. երկայնք ունեցող մսակեր ձուկ մըն է: Ան ունի 10 խռիկ, երկու կամ երեքի փոխարէն, բան մը, որ մտածել կու տայ, թէ ան կրնայ ջուրին մակերեսին վրայ շնչել: Ան կը սնանի կարիդոսներով եւ ջրային միջատներով:

Մինչ անասունի նոր տեսակներ գտնելը յաճախակի է, ձուկի նոր ընտանիք մը չէ նշմարուած 150 տարիէ ի վեր:

ՓԱՄՓՈՒՆԱՅԻ ՅՈՒԼԵՐՈՒ ՎԱՅՔԸ



1591էն ի վեր ամէն տարի Սպանիոյ

Փամփունա քաղաքին մէջ Ս. Ֆիրմինի տօնին առիթով ամէն առաւոյ 6 սուր կ'արձակուի քաղաքին փողոցներուն մէջ: Յուլերը կը վազեն 825 մեթր՝ մինչեւ սուրբու մրցարանը: Անասուններուն «կ'ընկերակցին» ճերմակ եւ կարմիր հագած մարդիկ, ձեռքերնին իբրեւ պէնք բռնած ճալուած թերթ մը: Անշուշտ արկածներ շատ կը պատահին, եւ ամէն տարի մեծ թիւով մարդիկ կը վիրաւորուին:

Այս վայրը կը տեւէ քանի մը վայրկեան, սակայն կը գրաւէ հազարաւոր պրօսաշրջիկներուն ուշադրութիւնը: Յուլերու այս վայրը, տօնակատարութիւնները եւ խրախճանքները կը տեւեն մէկ շաբաթ:

ԼԱԷ ԵՒ ԼԱՏԱՆ ՓՈՐՁԵՑԻՆ ԲԱԺՆՈՒԻԼ, ԲԱՅՅ...

Իրենց գլուխէն միացած 29 տարեկան երկուորեակներուն՝ Լալէի եւ Լատանի անջատման գործողութիւնը աւարտեցաւ նախ Լատանի եւ ապա Լալէի մահով:

Պիճանի քոյրերը 29 տարի առանց հարցի կրցած էին միասին ապրիլ, քնանալ, ինքնաշարժ վարել եւ համալսարան հասնիլ: 29 տարի ետք անոնք որոշեցին գործողութեան ենթարկուիլ՝ գիտնալով, որ կրնային մեռնիլ:

Սինկափուրի մէջ կատարուած այս գործողութեան ընթացքին աշխարհի տարբեր կողմերէն բժիշկներ եւ մասնագէտներ հաւաքուեցան օգնելու համար իրանցի քոյրերուն, սակայն անոնց ծիգերը ապարդիւն դուրս եկան:


Լալէն եւ Լատանը ճանչցողները կ'ըսեն, որ անոնք ուրախ, պուարթ եւ կատակասէր անձեր էին եւ ունէին պորաւոր կամք:

Աշխարհի տարբեր կողմերէն հազարաւոր մարդիկ նամակներով եւ ե-նամակներով անոնց մահուան առիթով յայտնեցին իրենց ցաւակցութիւնը:

ԴԱՐԼԻ - ՏԵՅՎԻՏԱՐՆ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՃԱՐԺԱՆԻՒՆԸ ԿՐ 50ՆԷ ԻՐ 100ՐԴ ՏԱՐԵՊԱՐՁԸ

24 տարբեր տեսակներ ունեցող այս ամերիկեան շարժանիւղ (մոթոսիքլէթ) կը ճախուի 47 երկիրներու մէջ եւ ունի հազարաւոր սիրահարներ:

1901 թուականին ամերիկացի երկու բարեկամներ՝ 21 տարեկան Ուիլիամ Բարլի եւ 20 տարեկան Արթըր Տէյվիտսըն կ'ուզեն միջոց մը գտնել՝ աւելի արագ փոխադրելու եւ ձուկ որսալու Միջիկըն լիճին վրայ: Անոնք իրենց բոլոր ժամերը կը յատկացնեն աւելի պորաւոր մեքենայ մը շինելու համար: Սակայն քանի մը ամիս ետք շարժակով հեծիկի մը մասին յօդուած մը կարդալով՝ անոնք կ'որոշեն շարժանիւղ մը շինել: Այս յատուկ շարժանիւղ իր առաջին քայլերը կ'առնէ Միուաքիի մէջ, 1903ին:





ՄՈՒՆԻՍՏՐԱՏՈՐ

ԱՐԵՒՆ ՈՒ ԾՈՎՐ

Դարձեալ ամառը եկաւ իր արեւով, տաքութեամբ, խոնաւութեամբ: Այս բոլորին միակ դարմանը՝ ծովը եւ անոր զովայնող ջուրը...

Արեւը շատ լաւ բարեկամ մըն է: Ան մեզ կ'ուրախացնէ: Ան նպաստաւոր է մեր առողջութեան: Օրինակ, ան անհրաժեշտ է ոսկորներուն աճումին համար: Սակայն, եթէ մենք երկար մնանք արեւուն տակ, ան մեծ վտանգի մը կը վերածուի եւ պատճառ կը դառնայ բազմաթիւ հիւանդութիւններու:

Բետեաբար միշտ մեր միտքը պահենք նախազուշտութիւններու ցանկը.

- Արեւուն տակ չմնալ առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00:

- Մորթին վրայ քսել պաշտպանողութեան բարձր թիւ ունեցող եւ ջուրի դիմացող սեր:

- Դնել գլխարկ եւ արեւու ակնոց:

- Արեւուն տակ հագնիլ թի-շորթ մը:

- Ճատ ջուր խմել:

- Զուր չմտնել ուտելէ անմիջապէս ետք, կամ արեւուն տակ երկար մնալէ ետք (այս պարագային, թրջել նախ վիզը, թեւերը եւ ոտքերը):

Մի՛ մոռնար նաեւ, որ արեւուն ճառագայթները կրնան թափանցել ջուրին մէջ, հետեաբար մենք պաշտպանուած չենք, երբ կը լողանք: Զգուշ ըլլանք նաեւ հովանոցին տակ նստած ատեն, որովհետեւ ջուրջի արեւոտ տեղերէն ճառագայթներուն ազդեցութիւնը կրնայ մեզի հասնիլ:

ԶՈՒՐՈՒՆ ՄԷՋ

Արեւուն կողքին, մեծ վտանգ են նաեւ ճովամայրերը: Գիտնականներ նշմարած են, թէ երեք տաք եւ չոր գարուններէ ետք, անոնք աւելի մեծ թիւով կը խուժեն դէպի ճովափ: Այս կլիման կը նպաստէ ճովամայրերուն նախասիրած ուտելիքին՝ մանր ճովային էակներու աճումին:

Միջերկրական ճովուն մէջ մենք ամէնէն շատ կը հանդիպինք Փելաժիա նորթիլուքա ճովամայրի տեսակին: Ան վտանգաւոր չէ, սակայն եթէ մորթի խայթէ, պէտք է ուշադիր ըլլաւ այրուածքներուն: Ինչ ընել:

- Զուրէն դուրս ելլել առանց իրար անցնելու:

- Այրուածքի՛ տեղը չքերել:

- Ծովի ջուրով արագօրէն ցօղուել (ո՛չ անուշ ջուրով):

- Վերքը մաքրել ալքոլով կամ քացախով:

- Զգել, որ չորնայ բաց օդին (չշփել):

- Երթալ դեղարան մը:

- Չմոռնալ, որ նոյնիսկ սատկած եւ ճովափին նետուած ճովամայրը նոյնպէս կրնայ վնասել:



ԱՍՏՊԻՆ



● Յունիսի վերջին ճաբաթը Լիբանան այցելեցին քանատահայ բեմադրիչ Աթոմ Էկոյեանն ու իր կինը՝ դերասանուհի Արսինէ Խանճեանը: 2002ին անոնք պատրաստած էին նշանաւոր «Արարատ» ժապաւէնը:

Լիբանան իրենց այցելութեան ընթացքին արուեստագետները այցելեցին նախագահ Էմիլ Լահուտի եւ Մեծի Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ի կողմէ յատուկ հանդիսութեամբ ստացան «Մետրոպ Մաշտոց»ի շքանշանը: Աթոմ Էկոյեան եւ Արսինէ Խանճեան հանդիպումներ ունեցան նաեւ լիբանանցի եւ հայ լրագրողներու, երիտասարդներու

եւ ժողովուրդին հետ:

● Ճարժապատկերի հսկաներէն Չարլի Չեփլինի ժապաւէններէն որոշ թիւ մը արդէն իսկ շուկայ իջած է Տի. Վի. Տի.ի վրայ: «Տը կոլտ ռաշ», «Մոտըրն թայմ», «Տը կրէյթ տայրեթըրը» եւ «Լայմլայթ» ժապաւէններէն ետք յառաջիկայ տարի Տի. Վի. Տի.ի վրայ պիտի արձանագրուին այլ ժապաւէններ եւս:

● Ծարժապատկերի աշ-

խարհին առասպելական աստղերէն դերասանուհի Բէթթին Բեփպըրն մահացաւ 29 Յունիսին: Ան 96 տարեկան էր:

Նշանաւոր դերասանուհին երկար տարիներ շարունակ եղաւ Բոլիվուտի ժապաւէններուն աստղը: Ան գլխաւոր դերերու համար ամէնէն աւելի «Օսքար»ի տիրացած դերասանուհին է (չորս անգամ), իսկ 12 անգամ թեկնածու եղած է լաւագոյն դերասանուհիի «Օսքար»ին:

Բէթթին Բեփպըրն եղած է գեղեցիկ եւ տաղանդաւոր դերասանուհի մը: Անոր կարեւոր ժապաւէններէն են «Էտըմպ դիպ», «Տը էֆրիքըն քոլին» եւ շատ ուրիշներ:



ՍԳԻՏՈՒՊՈՒՄՑ

ՆՈՐ ԺԱՊԱԿԵՆՆԵՐ

Ամրան արձակուրդի օրերուն մանուկներու եւ պատանիներու յատուկ քանի մը ժապաւէններ կը ցուցադրուին շարժապատկերի սրահներուն մէջ: Ահաւասիկ՝ անոնցմէ քանի մը հատը:



★ «ՏԸ ՈՒԱՅԼՏ ԹՈՐՆՊԸՐՈՒՋ»

Այս կենդանի գծանկարը կը պատմէ Թորնպըրի ընտանիքին դէպի Ափրիկէ ամառնային ծամբորդութեան մասին: Անոր կը միանան այլ ընտանիքներ, որոնց նաւը փոթորիկէն ընկղմած է: Բոլորը մէկ ամայի կղզիի մը վրայ կ'անցընեն հետաքրքրական եւ արկածախնդրական պահեր: Այս ժապաւէնը հարուստ է սուրճալի տեսարաններով եւ խօսակցութիւններով:

★ «ԷՅԸՆԹ ՔՈՏԻ ՊԵՆՔՍ»

Էքըն ժապաւէն մըն է: Պատանի Քոտի Պէնքս սովորական աշակերտ մը կ'երեւի, սակայն ան իր ընտանիքէն եւ նոյնիսկ ամէնէն մտերիմ ընկերներէն կը պահէ կարեւոր գաղտնիք մը: Իրականութեան մէջ ան մեծ լրտես մըն է եւ կ'օգնէ կառավարութեան, որ պաշտպանէ ժողովուրդը: Ան ունի արկածախնդրութիւններով լեցուն կեանք մը: Այս ժապաւէնին մէջ Քոտի պիտի փորձէ արգելք դառնալ իր գեղեցիկ դասընկերուհիներէն մէկուն հօր, որ կ'ուզէ կործանել երկիր մոլորակը:

★ «ԹԸՐՄԻՆԵՅԹԸ 3»

ՈՒՅՋ ԱՖ ՏԸ ՄԸՆԻՆՋ»

Նշանաւոր դերասան Առնոլտ Ճուարցնեկըր դարձեալ ստանձնած է այս հերոսին դերը: Արկածախնդրութիւններով եւ էքընով հարուստ այս ժապաւէնին մէջ մարդոց եւ մեքենաներու կռիւ կայ եւ Թըրմինէյթըրը այս անգամ եւս պիտի պաշտպանէ պատանի ճոն Քանըրը՝ այլ մեքենաներէ:

Տեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdig_mezdig@hotmail.com կամ քանակով՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»ի խմբագրութեան, «ՄՁՊԱ» «Ճապաւէններ» կեդրոն



ԳՐԱԳՐ

ԻՆՉ ԿՐ ԱՏԱԾԵՍ

10-15 բառով կարճիքդ տո՛ւր
հետեւեալ նիւթին մասին:
Պատասխանները հասցնել «ԱԶԴԱԿ»-ի
խմբագրատուն մինչեւ հինգշաբթի,
7 Օգոստոս 2003:

♦ Ինչու կարելու է, որ
մշակույթով հետաքրքրուինք:

Նախորդ հարցումին կարճիքները

-Ո՛չ, մարդիկ իրաւունք չունին
ամէն տեղ ծխելու, յատկապէս հոն
ուր բազմութիւն կայ, որովհետեւ
անոնց թոքերը պիտի լեցուին ծխա-
խոտի անախորժ ճուխով ու պատ-
ճառ պիտի դառնան, որ անոնք
հիւանդանան:

ՍԵՆԱԿ ԶԵՔՍԵԱՆ 4րդ դաս.

Բամաճայն չեմ, որ մարդիկ
իրենց ուզած տեղը ծխեն, որով-
հետեւ ծխախոտին նիւթինը
քաղցկեղի եւ շատ մը այլ հիւան-
դութիւններու պատճառ կ'ըլլայ:
Բնութեան թշնամին է ան: Օդը
կ'ապականէ, երբեմն ալ մէկ
ծխախոտով ամբողջ անտառ մը
կը փծանայ:


ԷԼԻ ՊԻԹԱՐ 5րդ դաս.

-Ո՛չ, որովհետեւ ծխախոտը
արդէն ինքնին վնաս է եւ մենք
իրաւունք չունինք դիմացինը նե-
ղացնելու եւ վնաս հասցնելու:


ՍԻՐՈՒՆ ՊԷՔԵՐԵՃԵԱՆ 4րդ դաս.

Ժամանցին պատասխանները լոյս
պիտի տեսնեն «Ազդակ»-ի
ծաբաթ, 19 Յուլիս 2003ի թիւին
մանկապատանեկան էջին մէջ:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 15Ի
ԾԱԿՈՂԸ
Բարցարան թիւ 15ի շահողը
Մեղրի Կիրակոսեան
(11 տարեկան, «Բամապայինի Ա. եւ
Բ. Արսլանեան Ճեմարան»-էն)
շահեցաւ անցեալ ամստան մրցումը:
Ան իր նուէրը կրնայ ստանալ
«Ազդակ»-էն, «Ճաղպոյեան» կեդրոն:



Գտի՛ր հայկական առակ մը:



Գտի՛ր ճաղիկներուն անունները:

ՊԱԿՈՒԱԾ ԲԱՐ

Դ	Ա	Կ	Ո	Վ
Պ	Մ	Ա	Ն	Ն
Ր	Ո	Ր	Բ	Ֆ
Ո	Ի	Է	Ո	Ա
Ց	Կ	Ա	Ի	Ի

Պահուած բառը՝ հայկական քաղաք (3 տառ) - - -

ՄՈՒԿ - ՐԷ - ԿԱԻ - ՈՐԲ - ՖԱ - ԿՈՎ -
ԿԱՐ - ԲՈՒ - ԴՊՐՈՑ - ԱՆ

ԽԱՉՔԱՐ ԹԻՒ 1

ՈՐՊԱՏԱՅԵԱՅ
1.- Այնտեղ, ուր
մարդիկ կը հա-
լարուին աղօթելու:
5.- Ծովուն եւ եր-
կինքին գոյնը:

ԲՈՐԻՋՈՆԱԿԱՆ
2.- Արագավազ եւ
գեղեցիկ աչքերով
անասուն մը:
3.- Պաղ եւ համեղ
ուտելիք:
4.- Իշուն ձագը:

ԽԱՉՔԱՐ ԹԻՒ 2

ԲՈՐԻՋՈՆԱԿԱՆ
1.- Առարկայ մը,
որուն վրայ ճաշ
կ'ուտենք:
3.- Ծաղիկ դնելու
աման:

ՈՐՊԱՏԱՅԵԱՅ
2.- Անասուններուն
թագաւորը:
4.- Ճատ պլտիկ
անասուն մը, որ կա-
տուին թշնամին է:

Ժամանցի էջին խաղերը պատրաստեց՝ ՓԱԹՐԻՍԻԱ ԽՈՐԾԻՏԵԱՆ, Ե. դասարան

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 16

- 1.- Խնդունը ինչո՞վ վարդարուած կ'ըլլար:

- 2.- Ռվ է Տուղրիլը:

- 3.- «Թուր Տը Ֆրանս»-ի աւարտին դր հեճելանուորդը կը հագնի դեղին
շապիկը: -----
Ամսուան հարցումին կրնան մասնակցիլ 6էն
12 տարեկան աշակերտները: Կտրօնը
ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»-ի
Անուն - Մականուն -----
Վարժարան -----
Ծննդեան թուական -----
Ինտաճայնի թիւ -----

Խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի
յայտարարուի մրցումը շահողին անունը:
Ան պիտի ստանայ նուէր մը:



ՃՊՊԿԱՄՈՒ

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԾԱՏ ՍԻՐՈՂ ԳՐՈՂՆԵՐ

Որո՞նք մանուկներու համար գրած են այսօրվա գեղեցիկ ու ճոխ գրականություն:

Մանկագիր գրողները:

Մանկագիրը այն գրողն է, որ կը գրէ այնպիսի պատմուածքներ ու բանաստեղծութիւններ, որոնք հասկնալի են մանուկներու համար եւ կը սիրուին ու կը կարդայուին անոնց կողմէ:

Ձեզի ծանօթ են Յովհաննէս Թումանեանի եւ Ղապարոս Աղայեանի անունները: Այս գրողները մեծ թիւով հեքիաթներ ու բանաստեղծութիւններ գրած են մանուկներու համար: Սակայն կան նաեւ մեծ թիւով ուրիշ հայ մանկագիրներ, ինչպէս՝ Աւետիք Իսահակեան, համաստեղ, Սիլվա Կապուտիկեան, Անդրանիկ Ծռուկեան եւ շատ ուրիշներ, որոնք ուրիշ գործերու կողքին, գրած են նաեւ մանուկները հետաքրքրող գրութիւններ:

Օտար գրողներէն շատեր եւս գրած են մանկական գրականութիւն: Յիշենք «Կարմիր գլխարկիկ»-ին ու «Ձիւնաթոյր»-ին հեղինակները՝ Քրիմ եղբայրները եւ «Անագէ փոքրիկ պիւտր»-ին ու «Բենպէլ եւ Գրեթել»-ին հեղինակը՝ հանս քրիսթիան Անտրսըն:

«ԻՆՏԻ ՓՈՅՐԸ ԷՆՏ ՏԸ ՕՐՏԸՐ ԱՖ ՖԵՕՆԻՔՍ» ԳԻՐՔԸ ՍԿՍԱԻ ԾԱԽՈՒԻԼ ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

Ամիսներու սպասումէ ետք, 21 Յունիսին վերջապէս լոյս տեսաւ գիրքի աշխարհահռչակ պատանի հերոսին՝ Ինտի Փոյրըին հինգերորդ գիրքը: Անգլիացի գրող ԾԷ. ՔԷ. Ռոլինկի «Ինտի Փոյրըն Էնտ տը օրտըր աֆ ֆեօնիքս» («Ինտի Փոյրըն եւ Փիւնիկի ուփստը») վերնագիրը ունեցող այս գիրքը միլիոնաւոր օրինակներով ծախուելու սկսած է իր շուկայ իջնելուն առաջին երկվայրկեանէն իսկ, երբ կէս գիշերին գրախանութները իրենց դռները բացած են՝ դրան առջեւ սպասող մեծ թիւով մանուկ եւ պատանի ընթերցողներու դիմաց: Բետաքրքրական է նաեւ, որ 21 Յունիսէն առաջ իսկ միլիոնաւոր ընթերցողներ գիրքը «գնած են» համապանցի վրայ:

Մանուկներուն եւ պատանիներուն համար ընթերցումը հաճելի դարձնելու Ինտի Փոյրընի կախարդական կարողութեան շնորհիւ «Ինտի Փոյրըն Էնտ տը օրտըր աֆ ֆեօնիքս»-ը դարձած է աշխարհի տարածքին մինչեւ այսօր ամէնէն արագ եւ շատ ճախուած գիրքը:

Ինտի Փոյրընի առաջին չորս գիրքերէն ծախուած է 200 միլիոն օրինակէ աւելի: Անոնք թարգմանուած են 55 լեզուներու եւ կը ծախուին 200 երկիրներու մէջ: Իսկ հինգերորդ գիրքէն լոյս տեսած է 13 միլիոն օրինակ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Ամրան արձակուրդի այս օրերուն որքան շատ պատկառելի կ'ունենանք: Ահաւասիկ յարմար առիթը՝ կարդալու նոր գիրքեր եւ ծանօթանալու անոնց մէջ նկարագրուած հետաքրքրական աշխարհներուն: Բնականաբար, ծմրան ընթացքին ալ մենք կը կարդանք, սակայն անոնք աւելի դասագիրքեր եւ ուսուցիչներուն կողմէ յանձնարարուած գիրքեր են:



Չէք ուզեր ամրան հանգիստ օրերուն դուք ձեզի առիթ տալ ձեր ուզած գիրքերը կարդալու: Անցնող շաբաթներուն լոյս տեսան մեծ թիւով մանկապատանեկան գիրքեր, որոնք կը հետաքրքրեն տարբեր տեսակի գիրքեր սիրող մանուկները: Ահաւասիկ անոնցմէ փունջ մը:

ԹՈՒՄԱՆԵԱՆԵՆ՝ ԵՐԵՔ ԻՆՏԻՔՍ...

Վստահաբար բոլորդ ալ լսած էք Յովհաննէս Թումանեանի «Քաջ Նապարը», «Ձախորդ Փանոսը» եւ «Ոսկիի կարասը» հեքիաթները: Այս ամառ հա-

մազգայինի «Վահէ Սէթեան» տպարանը կը հրատարակէ այս երեք հեքիաթները՝ գունաւոր եւ նկարազարդ գրքոյկներով:

ԲԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԲԱՄԱՐ

«Ես իմ անուշ հայաստանին»-ն բանաստեղծ Եղիշէ Չարենցի ամէնէն տարածուած, արտասանուած եւ երգուած գործերէն մէկն է: Ահաւասիկ գունաւոր եւ հրապուրիչ գրքոյկ մը այս բանաստեղծութեան իրաբանչիւր տողին կը նուիրէ

մէկ էջ՝ մանուկներուն ու պատանիներուն ներկայացնելով անոր հետ կապ ունեցող խօսքեր, բացատրութիւններ եւ գծագրութիւններ:

Իսկ հայոց պատմութեան քաջ հերոսներէն Տուրքիլը եւս ունեցաւ իր առանձին գրքոյկը՝ «Տուրքիլ եւ Թաթուկ»: Այս շատ գեղեցիկ պատկերներով վարդարուած գրքոյկը կը պատմէ հայ իշխանին քաջութիւնները, երբ ան կը պայքարի հայաստանի վրայ յարձակած սելճուկներուն դէմ:

ԻՆՏԻՔՍՆԵՐ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱՄԱՐ

Աշխարհի մանուկներուն կողմէ շատ սիրուած հեքիաթներ են «Ծովանուշը», «Մոխրիկը», «Երեք Խոզուկները», «Քնայած Իշխանուհին», «Կախարդուած Կարապները» եւ «Ձմրուխտէ Քաղաքը»: Այս հեքիաթները թէեւ արդէն իսկ կան հայերէն լեզուով, սակայն անոնց նոր գիրքերը եւ պատկերները մանուկներուն կը յի-

շեցնեն իրենց սիրելի հեքիաթներուն մանրամասնութիւնները:

ԿԱՏՈՒԻ ՍԸ ՊԱՏԱՆՈՒԹԻՒՆԸ

Պիժուսն բախտաւոր կատու մըն է, որովհետեւ ան վերջերս դարձաւ մանուկներու եւ պատանիներու յատուկ պատմուածքի մը հերոսը: «Պիժուս»



վերնագիրով եւ պատկերներով վարդարուած գիրքին մէջ Գրիգոր Ծահինեան կը պատմէ Պիժուսին կեանքը, անոր ծագուելներուն եւ տէրերուն հետ իր վարուած ճեղք, ինչպէս նաեւ՝ անոր բնաւորութեան հետաքրքրական կողմերը:



ԴՊՈՒՑՍԻՆ

ՄԻՋ -

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ...

Ճաբաթ մը մինակ մնաց առանձնացած իմ ընկերս,
Տխուր-տրտում պիս դիտեց մեկուսացած բարեկամս,
Ձիս կը դիտէր ամբողջ օրը,
Մինչեւ արեւին մայրամուտը:

Խնդճ արարած, կը կարծէր, որ վշտացած էի,
Աւելի լաւ պրաղումներ գտած էի,
Իրարու պիշ-պիշ կը նայէինք,
Մէյ-մէկ անձանօթներ էինք:

Երկարատեւ այս վիշտը եղաւ իսկական քնութիւն.

Ու հասաւ այն օրը, որ դարձեալ իրարու հանդիպեցանք,
Խօսեցանք, հաշտուեցանք, նորոգեցինք մեր ուխտը,
Նոր էջ, նոր կեանք իրարու մենք խոստացանք,
Դաշնակս՝ սրտակիցս, իմ լաւագոյն բարեկամս...

ԲԱԼԻԿ ԱՍՏՈՅԵԱՆ
(12 տարեկան)
2003 Ապրիլ

Մեր նախանցեալ թիւով հրատարակած էինք Աթէնքի «Սոֆիա Յակոբեան» դպրոցի աշակերտներէն եկած նամակները: Այս էջով կու տանք նամակ մը եւս:


Սիրելի՛ Պպտիկ-Մպտիկ,

Ես Ալեքսանտր Մարտիրոսեանն եմ «Սոֆիա Յակոբեան» վարժարանէն: Ես եւ սիրելի ընկերս՝ Արման Գրիգորեանը, պօսանքներուն մասին պիտի գրենք ձեզի:

Ուրեմն ամէն երկուշաբթի, երեքշաբթի եւ Ուրբաթ մեր գնդակի օրն է: Միասին «Խնձոր» խաղը կը խաղանք: Ճատ անգամ կը ճեճուկինք ատոր համար: Բացի «Խնձոր»էն կը խաղանք բռնուցի եւ պահուրտուք:

Ճատ անգամ ալ կը խօսինք ոտնագնդակի մասին մինչեւ որ վանգը հնչէ:

Սիրով՝ ԱԼԵՔՍԱՆՏՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



Մեղրի Տումանեան, 7 տարեկան



Նարինէ Գարակիլլեան, 10 տարեկան



Փարիլ Պէլզեան, 10 տարեկան



Ռիբա Աւետիսեան, 12 տարեկան

★ ՈՒՅՆԱԴՐՈՒԹԻՒՆ ★

Բոլոր այն աշակերտները, որոնք կը փափաքին գճագրութիւններ դրկել «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ին, որպէսզի կարելի ըլլայ նկարը ամբողջութեամբ արտատպել, թող հաճին նկատի ունենալ առաւելագոյնը հետեւեալ չափը.

20,5 cm x 21 cm: